Արձանագրություն N 3

Դատական դեպարտամենտի կարիքների համար՝ գրասենյակային նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/34» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«25» նոյեմբերի 2019թ.
Ժամը՝ 10:30

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Էդգար Տոնականյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ **ԳՊ/ԳԱՊ**) ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի աշխատակազմի ղեկավար,

հանձնաժողովի անդամներ՝

Հայկ Սարգսյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**) Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի պետ,

Էդգար Մելքոնյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**) ՀՀ վարչական դատարանի աշխատակազմի ղեկավար

Գրիգոր Գաբրիելյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ**) ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի աշխատակազմի ղեկավար,

Արմինե Ալիխանյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ**) Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Շենգավիթ նստավայրի պատասխանատու:

հանձնաժողովի քարտուղար՝

Մարիամ Հայրապետյան (Գնման Պատասխանատու/Մրցույթի համակարգող՝ **ԳՊ/ՄԻՄ**) Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ.

1. Տեղեկատվություն՝ Հայտում արձանագրված անհամապատասխանությունները մասնակցի կողմից շտկելու վերաբերյալ.

<<ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ>> ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկել է իր հայտում արձանագրված անհամապատասխանությունը, հետևաբար նշված մասնակցի հայտը գնահատվում է բավարար:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Տեղեկություն՝ առաջարկված գների նվազեցման նպատակով միաժամանակյա բանակցություններ վարելու անհրաժեշտության վերաբերյալ,

2.1 Հաշվի առնելով, որ սույն գնումն իրականացվում է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝ համաձայն Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի՝ անհրաժեշտություն է առաջանում՝ առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարելու միաժամանակյա բանակցություններ:

2.2 Ղեկավարվելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի բ պարբերությամբ՝ հանձնաժողովը որոշեց՝ հանձնաժողովի նիստը կասեցնել և միաժամանակյա բանակցություններ վարելու նպատակով հրավիրել նիստ 2019թ. նոյեմբերի 27-ին՝ ժամը 12:00-ին՝ Դատական դեպարտամենտի շենքում (ք. Երևան, Վ. Սարգսյան 5):

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝

Էդգար Տոնականյան

Անդամներ՝

Հայկ Սարգսյան

Էդգար Մելքոնյան

Գրիգոր Գաբրիելյան

Արմինե Ալիխանյան

Քարտուղար՝

Մարիամ Հայրապետյան